ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«06» 02 2024 թ.
№ ԳԿԱՊ-24/2-99

«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ
ՀՎՀՀ (00471216)

Իրավ. հասցե՝ ք. Երևան, Դավիթ Բեկի 1 թղմ, 5 տուն

գործ. հասցե՝ ք. Երևան Գ. Շերամի 92/3

գործ. հասցե՝ ՀՀ, Արմավիրի մ., Փարաքար համայնք,
գ.Թաիրով, Դեմիրճյան թղմ, 1փ, 22/1 էլ.

փոստի հասցե՝ shoghakat.baghdasaryan@theopharma.am
հեռ. 010 720880

ՀՀ պաշտպանության նախարարության և «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊ ընկերության միջև 16.11.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-9/52-6 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) և 20.12.2023թ. պայմանագրին կից կնքված համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) շրջանակներում «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊ ընկերությունը 2023թ. 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 20.12.2023թ. պետք է մատակարարեր 50 հատ «Տրիամցինոլոն (տրիամցինոլոնի ացետոնիդ)», որ չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը **2024թ. փետրվարի 6-ին** միակողմանի **մասնակի** լուծել է Պայմանագիրը չմատակարարված ապրանքի մասով:

Տեղեկացնում ենք, որ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **935** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), **550** ՀՀ դրամ տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) **տույժը հաշվարկված է մինչև 25.12.2023թ.:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման

գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **11 000** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **16 500** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև **2024թ. փետրվարի 16-ը** ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **11 000** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **16 500** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև **2024թ. փետրվարի 16-ը** ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2076 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ